ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2.1

«ՎՁՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-ՀԳԷԱ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Ջերմուկ 24 հոկտեմբերի 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Անդրանիկ Աբրահամյան

Անդամներ՝ Ստեփանոս Վարդանյան
Վահե Ղազարյան
Քարտուղար՝ Արման Հայրապետյան

«ՎՁՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-ՀԳԷԱ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018թ.-ի հոկտեմբերի 17-ի N2 արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն, որին ՀՀ կառավարության 2017թ թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացների կազմակերպման սահմանված կարգով /այսուհետև՝ Կարգ/ առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Համաձայն նշված Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: **Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը**

և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից Կարգի հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, հետևաբար մերժել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը և առաջարկել 2-րդ տեղ զբաղեցրած «Հովզավ» ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Անդրանիկ Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ստեփանոս Վարդանյան

_____ Վահե Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արման Հայրապետյան